ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013թ. հունվարի 30 թիվ 9 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՐԴԱՑՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.22 կետերի պահանջներով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2013 թվականի գարնանային հորդացումների, սելավների վտանգի նվազեցման և դրանց կանխարգելման միջոցառումների իրագործման նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի սելավավտանգ գոտու համայնքների ղեկավարներին առաջարկել.

1/ 2013 թվականի մարտի սկզբից իրականացնել սելավատարերի մաքրման աշխատանքներ,

2/ հորդացումների սպառնալիքի դեպքում համայնքի վտանգավոր թաղամասերից կազմակերպել բնակչության, գյուղատնտեսական կենդանիների և նյութական արժեքների տարահանում,

3/ նշված միջոցառումներն իրականացնել համայնքների բյուջեների հաշվին,

4/ համայնքի ավագանու համաձայնությամբ ընդունել համապատասխան որոշումներ՝ նշված միջոցառումներն իրականացնելու համար

2. Պետական կառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ գործնական և նյութական աջակցություն ցուցաբերել տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետին՝ հսկողություն սահմանել կանխարգելիչ միջոցառումների իրականացման ուղղությամբ և կատարված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

4. Սույն կարգադրության մասին իրազեկել սելավավտանգ գոտու համայնքի ղեկավարներին, պետական կառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին և մարզպետարանի համապատասխան աշխատակիցներին:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետին:

Ժ/Պ

Ա. ԱՐՍԵՆՅԱՆ